

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐԻ  
ՅԵՎ  
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏԵՆԱԿԱԼԻ  
ԳՐԱԴԱՐԱՆ

Մ. Վ. ԿՈԺԵՎՆԻԿՈՎ

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ  
ԸՆԴՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Խ. Տ. ԳՈԼՅԱԿՈՎԻ  
ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄՑ

343  
4-63

343  
4-63

ԽՍՀ ՄԻՆԻԹՅԱՆ ԱՐԴՅՈՂՆՈՒՄԱՏԻ ԵՐԱՎԱՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԺՈՂՈՎՐԴՈՒԿԱՆ ԳԱՏԱԿՈՐԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴՈՒԿԱՆ ԱՏԵՆԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ

343  
01 MAR 2010



# ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՀՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ի. Տ. ԳՈԼՅԱԿՈՎԻ  
ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆՔ

Վերջին ժամանակները դատական որդանները համալրվել են ժողովրդական դատավորների և ժողովրդական ատենականների նոր կազմերով, վորոնք գեւմես բավարար չափով ծանօթ չեն խորհրդային որենսդրության ու շունեն դատական աշխատանքի անհրաժեշտ փորձ։ Այդ ընկերներին ողնություն եւ պետք, վորակեսզի նրանք արագ կերպով կարողանան տիրապետել զործին, ընդգրկեն դատական աշխատանքի հիմնական հարցերը, կողմնորոշվեն դատարանի առաջ դրված ինքիրներում։

«Ժողովրդական դատավորի և ժողովրդական ատենակալի դրադարան»—ի լույսնեայումը զբարի չափով կլրացնի արդարադատության մարմինների իրավաբանական հանրաժամանակների գրականության բացը և եյական ոժանդակություն ցույց կտա ժողովրդական դատավորին և ժողովրդական ատենակալին՝ նրանց գործնական աշխատանքում։

Դրադարանը բազկացած եւ քրեական և քաղաքացիական իրավունքի, դատական իրավունքի առանձին հարցերին և ժողովրդական դատարանի աշխատանքների այլ առանձին հարցերին նվիրված մի չարք գրքերից։

Իրավաբանական հրատարակչությունը ինդրում եւ ընթերցողներին լույս ընծայվող դրադարանի վերաբերյալ իրենց կարծիքն ու դիտողություններն ուղարկել հրատարակչությանը։



Կ 3340.63

## ԳԼՈՒԽ I

## ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Յարական Ռուսաստանում, ինչպես և մյուս շահագործողական պետություններում, բաղմաթիլ զանազան դատարաններ կային, որինակ՝ վորոստային, հողեւոր, հաշտարար դատարաններ, հաշտարար դատավորների համագումարներ, ոկրությային դատարաններ, դատական պալատներ, զինվորական դատարաններ, զեմստվոյի պետերի դատարաններ և այլն և այլն։

ԽՍՀՄ-ում դատական սիստեմը շատ պարզ է։ Նրա կառուցվածքը համապատասխանում է ՀամԿ(բ)Կ ծրագրին, վոր ընդունվել և 1919 թ. կուսակցության VIII համագումարում։ Այնտեղ դրված եւ «Զանազան կառուցվածքի բազմաթիլ ատյաններով նախկին դատարանների անվերջ շարանի փոխարեն միասնական ժողովրդական դատարան ստեղծելով։ Խորհրդային իշխանությունը պարզեցրել է դատարանի կառուցվածքը, ընակչության համար բացարձակապես մատչելի դարձնելով այն և վերացնելով դորժակարության մեջ յեղած ամեն տեսակի քաշքառուկը»։

Յարական Ռուսաստանում բաղմաթիլ դատարանների դոյլությունը խիստ խճճում եր գործերի ընդդատության հարցի ճիշտ վորոշումը և անվերջ քաշքառուկ եր ստեղծում դործերի քննության հարցում։ Դեռ ամելին։ նա կամայականության հնարավորություն եր ստեղծում դործերի ընդդատությունը վորոշելու և այն դատարանին հանձնելու, վորտեղ հնարավոր կլիներ լավագույն ձեռվ հասնելու շահագործողական դատարանի նպատակին—աշխատավորների նկատմամբ դատաստան տեսնելուն։

Մեղ մոտ, կը ԱՀՄ-ում, դատական սիստեմի պարզություն-նը ցայտուն կերպով զրակորպում և թեկուզ հենց այն փաս-տով, վոր դորձերի մոտ 90%-ն ընդդատյա յե ժողովրդա-կան դատարանին: Ընդդատության վորոշումը մեր դատա-կան սիստեմում վորեե առանձին դժվարություն չի ներկա-յացնում: Ժողովրդական դատարանների ընդդատությունը մեղ մոտ անընդհատ ընդդարձակվել ե և ներկայումս նա դիտվում է վորպես հիմնականը, իսկ ինքը՝ ժողովրդական դատարան հանդիսանում է ամբողջ դատական սիստեմի հիմնական բջիջը: Դրա համար ել միութենական հանրապե-տությունների քրեական-դատավարության դործող որենս-դրքերում ժողովրդական դատարանին ընդդատյա գործերի դիմում վո՛չ թե տրվում է դորձերի թվարկումը, այլ նշվում է, վոր ժողովրդական դատարանին ընդդատյա յեն բոլոր դորձերը, բացառությամբ միայն այն դորձերի, վորոնք վերապահված են այլ կարդի դատարանների ընդդատու-թյանը:

Ընդդատության վորոշումը, այսինքն այն հարցի լու-ծումը, թե այս կամ այն հարուցած գործը դատարաններից վորին ե ընդդատյա, առաջին անդամ տալիս ե այն որդա-նը, վարը գործը դատարան և ուղարկում քննելու: Այդովուր որդաններ են հանդիսանում հետաքննական որդանները կամ դատախաղությունը: Այնուհետև ընդդատության հարցն ստուգում է այն դատարանը, վարուել դործն ստուգվել է: Դատարանն իր նախապատրաստական (տնօրինական) նիս-տում այլ հարցերի շարքում վորոշում ե նաև դործն իր վա-րութիւն ընդունելու հարցը և գրանով իսկ վորոշում ե առվյալ կոնկրետ դործն իրեն ընդդատյա լինելու հարցը: Ընդդատության հարցը կարող է ծագել նաև դատական նիս-տում դործի քննության ժամանակ: Այս կամ այն դատարա-նի կողմից դործն իր դատական քննությանն ընդունելու ճշտությունը քննարկվում է նաև վերադաս դատարանի կող-մից, յերբ արդեն դատարանի դատավճիռը կայացված է և դանդատի կամ բազոքի կարգով դործն անցել է վերադաս դատարանի քննարկմանը, կամ թե մինչեւ դատավճիռ կա-յացնելը, յեթե վերադաս դատարանում դանդաս ստացվե-

այն մասին, վոր դատարանը ճիշտ չի վարվել դործն իր վա-րութիւն վերցնելով:

Գործի ընդդատությունն այս կամ այն դատարանին, վոր սահմանված է որենքով, պարտադիր և բոլորի համար. վո՛չ դատարանը, վո՛չ կողմերը, չեն կարող իրենց հայեցո-ղությամբ ընտրել այն դատարանի տեղն ու կատեղորդիան, վորտեղ պետք է քննվի գործը: Յեթե մի վորեե դատարան գործն իրեն ընդդատյա յե ճանաչել, ապա մի ուրիշ դատա-րան չի կարող այդ գործն իր վարութիւն ընդունել, մինչեւ վոր չվերացվի այն վորոշումը, վորով դատարանն այդ գործն ընդունել է իր վարութիւն: Այդ բանը կարող է անել նույն դատարանը, բայց դատական նիստում և միայն մինչեւ գործին վերաբերող ապացույցների ստուգումը (ԱթֆՍՀ Քր. Դատ. Որ. Հոդ. 39 և մյուս միութենական հանրապե-տությունների Քր. Դատ. Որ. Համապատասխան հոդվածնե-րը), նմանապես և, ինչպես արդեն նշվեց, վերադաս դատա-բանը:

Գործի ընդդատության հարցի ճիշտ վորոշումը դատա-վարական խոշոր նշանակություն ունի, վորովհետեւ՝ 1) դա-տարանների տարբեր կատեղորդիաններին որենքով տարբեր իրավունքներ են վերապահված: որինակ՝ ժողովրդական դատարանը դատավարությալի նկատմամբ պատժի վերազույն չափը կիրառել չի կարող, մինչեւ վերադաս դատարաննե-րը վորոշ հանցանքների նկատմամբ վորոշ զեղկերումը ողովում են այդ իրավունքից: 2) Ջրային կամ յերկա-թուղային տրանսպորտում կատարված հանցաղործությունների հետ կապված դորձերի քննությունն ամելի լիակատար ու բազմակողմանիորեն կարող է տեղի ունենալ տրանսպոր-տային հասուել դատարաններում, մի բան, վորին հասնել չել կարելի այդ դորձերն ընդհանուր դատարաններում քննե-լիր (որինակ՝ մերկամասային (մարզային) դատարանում և այլն). 3) յերբ գործը քննիում է այն շրջանի դատարա-նում, վորտեղ կատարվել է հանցաղործությունը, վորպես կանոն, ամելի լավ արդյունք է ստացվում, վորովհետեւ հանցանքը կատարված շրջանումն են ապրում վեաները, տուժողները, վորոնք դատարանին անհրաժեշտ են դործը քննելու ժամանակ: 4) ընդդատության ճիշտ վորոշումն

ապահովում ե գործի ամենաարագ քննությունը, վորով-  
հետեւ ընդդատության խախումը կարող ե դատավճիռը  
փոխելու պատճառ դառնալ:

Այս ե քրեական գործերի ընդդատության դատավարա-  
կան նշանակությունը:

Գ Լ Ո Ւ Խ Ա

## ԸՆԴԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Խորհրդային դատավարությանը հայտնի յեն ընդդա-  
տության յերեք տեսակներ՝ տեղական, տեսակային (քօ-  
довայ) և պերսոնալ:

### 1. ՏԵՂԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՐԻՏՈՐԻԱԼ ԸՆԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Յեթե քաղաքացիական գործերով ընդդատությունը վո-  
րոշելու գլխավոր հիմք ե հանդիսանում պատասխանողի  
բնակավայրը, ապա քրեական գործերով ընդդատությունը  
վորոշելու համար ուրիշ հիմք ե բնդունված. այն վորոշում  
ե վո՛չ թե ըստ մեղադրյալի բնակավայրի, այլ ըստ այն  
վայրի, վորտեղ նա կատարել ե հանցագործությունը  
(ՌԽՖՍՀ Քր. Դատ. Որ. Հոդ. 29 և մյուս միութենական  
հանրապետությունների որենսդրքերի համապատասխան  
հոդվածները):

Բնդպատության այլ սկզբունքը շատ հիմքեր ունի:  
Դրանք հետեւյալներն են.

1) Մեր դատարանն ընտրական մարմին ե. մեր դատա-  
վորներն իրենց աշխատանքի մասին հաջիվ են տալիս աշ-  
խատավորների առաջ: Բնական ե, վոր այդ դատարանի աշ-  
խատանքը բնակչությանն ավելի շատ հասկանալի կլինի,  
յեթե նա քննում ե տվյալ տերիստորիայում կատարված  
հանցագործություններին վերաբերող գործերը: 2) Յեթե  
գործը լավում ե այն վայրում, վորտեղ կատարվել ե հան-  
ցագործությունը, դատարանի համար ավելի դյուքին  
կլինի վկաներին կանչել, սովորաբար նրանք ապրում են  
նույն վայրում և դատարան ներկայանալը նրանց համար  
առանձին դժվարություն չի լինի: 3) Հանցագործությունը

կատարված վայրում սովորաբար ասրում են այլ հանցա-  
գործությունից տուժողները, վորոնց համար հեշտ կլինի  
դատարան ներկայանալ ե ներկայացնել կատարված հանցա-  
գործության բոլոր անհրաժեշտ ապացույցները: 4) Յեթե  
գործը քննվում է այն վայրում, վորտեղ հանցագործու-  
թյունն ե կատարվել, դրանով գործի հասարակական նշա-  
նակությունն ուժեղանում է:

Սակայն, լինում են դեպքեր, յերբ հնարավոր չի լինում  
պարզել, թե հանցագործությունը վորտեղ ե կատարվել:  
Որինակ, Խարկովից Մոսկվա ճանապարհին ուղևորի  
իրերը գողացվել են: Իրերի տերը կորուստն իմացել ե  
միայն Մոսկվային մոտենալիս: Զեռք առնված միջոցների  
շնորհիվ իրերը և դրանք գողացող անձը հայտաբերվել  
են Մոսկվայում: Թեև իրերի գողությունը կատարվել ե  
վո՛չ Մոսկվայում, գուցե և զեռ գնացքը Խարկովից  
դուրս չեկած իրերը գողացված են յեղել, բայց և այնպիս  
գործը յենթակա յե քննության այնտեղ, վորտեղ քրեական  
հետապնդում և հարուցված, այսինքն Մոսկվայում:

Յեթե հանցագործությունը յերկարատև բնույթ ե  
կրում, ապա, թեկուղ և հանցագործությունն սկսելու վայ-  
րը հայտնի լինի, նպատակահարմար ե գործը քննել այն  
դատարանում, վորի գործունեյության ըրջանում մեղա-  
դրյալը բռնվել ե: Այսինքն անհրաժեշտ չե, վոր մի ուրիշ  
տեղ գնած միերքը կամ ապրանքը վաճառելիս բռնված սպե-  
կումնուր գործի քննության համար անպայման ուղարկելի  
այն դատարանը, վորի գործունեյության ըրջանում սպեկու-  
լանուր զնել ե այդ ապրանքը: Գործը յերկարատև հանցա-  
գործությունն սկսած վայրն ուղարկել կարող ե միայն այն  
գեղքում, յերբ առանց այլ անելու հնարավոր չե լիովին  
հետապնդել գործի բոլոր հանդամանքները:

Վերոհիշյալ դեպքերում տեղային ընդդատությունից  
չեղում գոյություն ունի, բայց այլ չեղումն անհրաժեշտ ե,  
վերոգիշետե զա ապահովում ե գործի ամենաարագ քննու-  
թյունը: Այստեղից ել բղյում ե ՌԽՖՍՀ Քր. Դատ. Որ.  
նույն 29-րդ հոդվածի ցուցումը, թե՝ «յեթե հանցագործու-  
թյան վայրը վորոշելն անհնարին ե, գործն ընդդատյա յե

այն դատարանին, վորի շրջանում հարուցված եւ քրեական հետապնդումը» :

## 2. ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱՄ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԻԱՏՈՒԹՅՈՒՆ

Ընդդատության այս սկզբունքը կայանում է նրանում, վոր գործերի կատեղորիայի վորոշումն ըստ նրանց տեսակի՝ պետական, կառավարման կարգի դեմ, անձնավորության դեմ և այլն, վերաբերում են այս կամ այն կատեղորիայի դատարանների վարույթին—դինուրական տրիբունաներին, յերկրամասային (մարզային) դատարանին, ժողովրդական դատարանին և այլն :

Տեսակային ընդդատությունը հարկավոր է նրա համար, վոր քրեական գործերն ըստ իրենց բնույթի տարրեր են լինում. լինում են պարզ գործեր, լինում են բարդ գործեր, միքանիսը չոշափում են վոչ եյական շահեր, ուրիշները՝ մարդկային բարորության արժեքավոր չահերն են չոշափում, միքանիսը վոչ մի բնորոշ առանձնահատկություն չունեն, ուրիշները, ինչպես որինակ՝ ջրային ու յերկաթուղային տրանսպորտում կամ բանակում ու նախառում կատարած հանցագործություններին վերաբերող գործերն այդպիսի առանձնահատկություններ ունեն:

## 3. ՊԵՐՍՈՆԱԼ ԸՆԴԻԱՏՈՒԹՅՈՒՆ

Քերսոնալ ընդդատության սկզբունքը կայանում է նրանում, վոր այս կամ այն պաշտոնատար անձերը պաշտոնեական հանցագործությունների համար, ի շեղումն ընդհանուր կանոններից, դատվում են վերապատրաստարանների կողմէ :

Որինակ՝ ՌԽՖՍՀ, Բելոռուսական, Վրացական ԽՍՀ Քր. Դատ. Որ. 449-րդ հոդվածներում, Աղբբեշանական ԽՍՀ Քր. Դատ. Որ. 438-րդ հոդվածում նշված է, վոր Գերազույն դատարանին, վորպես առաջին ատյանի դատարանի՝ ընդդատյա յեն այն գործերը, վոր հարուցված են Գերազույն Խորհուրդների անդամների, ժողովրդական կոմիսարների, ժողովրդական կոմիսարների կոմիսարների անդամների, Գերազույն դատարանի անդամների, հանրապետության դատախաղի ու նրա ողնականների և այլ անձերի

դեմ՝ պաշտոնեական հանցագործությունների մեղադրանքով:

Քերսոնալ ընդդատությունը միութենական հանրապետությունների գործող քրեական-դատավարական որենսգործում անհան տեղ է դրավում:

ԽՍՀՄ, միութենական ու ավտոնոմ հանրապետությունների դատարանակազմության Որենքի 5-րդ հոդվածում ասված է, վոր «ԽՍՀՄ-ում արդարադատությունն իրականացվում է հետեւյալ սկզբունքներով. ա) բոլոր քաղաքացիների համար միասնական ու հավասար դատարանով, անկախ քաղացիների սոցիալական, դույքային ու ծառայության դիրքեց, նրանց ազգային ու ռասայական պատկանելությունից» :

Այդպիսով պերսոնալ ընդդատության որենքը նկատի ունի վո՞չ միայն վորոշ կատեղորիայի պաշտոնատար անձերին, այլև հանցագործությունների քննոյթը: Նույն անձնավորությունը, վորը պաշտոնեական հանցագործության համար ընդդատյա յե, որինակ, միութենական հանրապետության Գերազույն դատարանին, իր պաշտոնեական դիրքի հետ կապ չունեցող ընդհանուր քրեական հանցագործության համար, համաձայն դատարանակազմության որենքի 5-րդ հոդվածի, ընդդատյա յե ժողովրդական դատարանին:

Սրանց են ընդդատության յերեք տեսակները, վոր նախատեսված են մեր քրեական-դատավարության որենսդրությամբ:

Գ 1. Ռ Խ Խ Խ III

## ԳՈՐԾԵՐԻ ԸՆԴԻԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՍԳՐՔԵՐԻ

Ընդդատության հարցերը վերաբերում են դատարանակազմության և դատավարության բնադրավառին: Նրանք մի կողմից վորոշում են դատարանների առանձին կատեղորիաներ մացնելու շրջանակը և դրանով իսկ մտնում են այն

Հաւշերի շրջանակը, վորոնք վերաբերում են հենց դատարանների բնութեազբանը, մյուս կողմից նրանք վորոշում են առանձին գործերի դատական ընթացքի կարգը և դրանով իսկ մոտիկ հարաբերություն ունեն դատավարության կանոնների հետ։ Դրանով ե բացարձում այն հարցը, թե ինչու ընդդատության հարցերը վերաբերում են մերթ դատարանակազմության ընադապանին, մերթ՝ դատավարության ընադապանին։ Առանձին միութենական հանրապետություններում գործող դատարանակազմության կանոնները չեն չոչափել ընդդատության հարցերը՝ վերաբերում զրանք իրենց քրեական-դատավարության որենսգրքերին։ Դրան հակառակ, ընդհանուր-միութենական կարգով հրատարակվող՝ իրենց գերազանց գաղափությունի կանոնագրությունը և հատուկ դատարաններին վերաբերող կանոնագրություններն իրենց մեջ ունեն և այն կանոնները, վորոնք վորոշում են այդ դատարանների ընդդատությունը։

ԽՍՀՄ, միութենական ու ալտոնոմ հանրապետությունների դատարանակազմության Որենքի 21, 32, 40, 48, 58, 60, 67, 69, 71-րդ հոդվածներում մտցված են այն հիմնական կանոնները, վորոնք բնորոշում են, այսպես կոչված՝ տեսակային կամ առարկայական ընդդատությունը զանազան կատեգորիայի դատարաններին։ Այդ կանոններն ունեն ընդհանուր բնույթ և մեծ մասամբ իրենց մեջ նշում են այն գործերը, վորոնք որենքով վերապահված են համապատասխան դատարանների վարութիւնն։ Այդպիսով, ըստ գործերի տեսակի այս կամ այն կատեգորիայի դատարանին ընդդատում լինելը վորոշելու համար զեկավարություն և հանդիսանում այն ընդհանուր ցուցումը, վոր տրված ե ԽՍՀՄ, միութենական ու ավտոնոմ հանրապետությունների դատարանակազմության որենքում, այն ցուցումները, վոր այդ հարցի վերաբերյալ կան համապատասխան միութենական հանրապետության Քրեական-դատավարության որենսգրքում և այն ցուցումները, վոր մտցված են այս կամ այն դատարանի, ոինվորական տրիբունալների, յերկաթուղային ու ջրային տրանսուրտի գծային դատարանների կանոնագրությունների մեջ։

Անցնենք ընդդատության քննարկմանն ըստ դատարանների առանձին կատեգորիաների և ըստ գործերի տեսակների։  
1. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև 1938 թ. ողոսոսը, յերբ հրատարակվեց ԽՍՀՄ, միութենական և ավտոնոմ հանրապետությունների դատարանակազմության Որենքը, միութենական հանրապետությունների ժողովրդական դատարանի ընդդատությունն որենսգրությամբ վորոշվում եր տարբեր ձևերով։ Սովորաբար տարբերում եին դատավորի միանձնյա ընդդատությունը և դատարանի ընդդատությունը ժողովրդական տեսնակալների հետ։ Այժմ այդ այլազանությունը վերացված ե և ԽՍՀՄ ամբողջ տերիտորիայի վրա ժողովրդական դատարանի ընդդատությունը սահմանված է միասնական ձևով։

ԽՍՀՄ, միութենական և ավտոնոմ հանրապետությունների դատարանակազմության որենքի 21-րդ հոդվածն ասում է. «Ժողովրդական դատարանը քննում է.

ա) քրեական գործերը —

քաղաքացիների կյանքի, առողջության, աղատության և արժանապատվության գեմ կատարված հանցագործությունների, մարմնական վնասվածքներ հասցնելու, անորինական արորտ անելու, ապորինաբար աղատությունից զրկելու, բոնաբարելու, չարամտորեն ալիմենտ չվճարելու, վերավորանքի, խուլեղանության, զրաբարտության վերաբերյալ։

գույքային հանցագործությունների վերաբերյալ—ավագակության, կողովուտի, զողության, խարդախության, հարստահարության վերաբերյալ։

պաշտոնատար անձերի պաշտոնեական հանցագործությունների վերաբերյալ—իշխանության չարաշահման, իշխանականցության, իշխանության անգործության, վատնումների, անտնեսավարության, կեղծիքների, թերակշռուման, թերաչափման, գների վերապահման։

վարչակարգի գեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ—ընտրական որենքի խախտման, որենքով սահմանված հարկերն ու գանձումները չարամտորեն չվճարելու,

պետական հանձնումներն ու պարտականությունները կատարելուց հրաժարվելու, զինակոչից և զինվորական ծառայության պարտականություններից հրաժարվելու, իշխանության մարմինների որինական կարգադրությունները խախտելու վերաբերյալ...»:

Սակայն չեր բացառվում այն հնարավորությունը, վորայդ ընդդատությունը կարող է լրացվել հատկապես այդ առթիվ հրատարակված վորոշումներով։ Այդ նշում և նաև դատարանակաղմության Որենքի 21-րդ հոդվածը, վորի մեջ ժողովրդական դատարանին ընդդատյա դործերի այսպիսի թվարկումից հետո նշում է. «և ուրիշ քրեական ու քաղաքացիական գործեր, վորոնք որենքով վերապահված են նրա վարույթին»։

Առեւլով ժողովրդական դատարանի ընդդատության մասին՝ անհրաժեշտ են նշել, վոր միքանի ավելի մանր քրեական գործեր կարող են քննվել նաև հաստարակական դատարանների կողմից։ Այդ դատարանների կողմից քննվող գործերի կատեգորիաները վորոշում են վո՞չ թե քրեական դատավարության որենսդրքերով, այլ այդ դատարանների մասին յեղած կանոնադրություններով։

## 2. ՅԵՐԿՐԱՄԱՍԱՅԻՆ (ՄԱՐԶԱՅԻՆ), ՈԿՐՈՒԳԱՅԻՆ ԴԱՏԱԲԱՆՆԵՐԻ ՅԵԿ ԱՎՏՈՆՈՄ ՄԱՐԶԵՐԻ ԴԱՏԱԲԱՆՆԵՐԻ ՅԵՐԿՐԱՄԱՍԱՅԻՆ ՀԵՐԿՐԱՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Այդ ընդդատությունը վորոշված է ԽՍՀՄ, միութենական ու ավտոնոմ հանրապետությունների դատարանակաղմության Որենքի 32-րդ հոդվածով։ Այսուղ ասված է, վորայդ դատարաններին ընդդատյա յեն որենքով նրանց վարույթին վերապահված այն քրեական գործերը, վորոնք վերաբերում են հակահեղափոխական հանցագործություններին, պետական վարչաձեկի դեմ հատկապես վտանգավոր հանցագործություններին, սոցիալիստական սեփականության հափշտակություններին և պաշտօնեական ու տնտեսական հաստակապես կարևոր հանցագործություններին։

ԽՍՀՄ, միութենական ու ավտոնոմ հանրապետությունների դատարանակաղմության Որենքի 18-րդ հոդվածը նախատեսում է քրեական հետապնդում հարուցելու, դատա-

վորներին պաշտոնից հեռացնելու և դատի տալու հատուկ կարգ, վոչինչ չասելով նրանց նկատմամբ ընդդատությունը փոփոխելու վերաբերյալ։

Դատավորների նկատմամբ ընդդատության վորեւ փոփոխվյուն, յենելով միայն նրանց պաշտոնեական դիրքից, չպետք է լինի։ Պործը վերադաս դատարանի քննությանն ուղարկվել կարող է միայն հաշվի առնելով դործի բնույթը, նրա առանձին կարևորությունը։

Կատարված հանցագործության հատուկ կարեւորությունը վորոշում է դատարախաղը, վորը դործը տալիս է այս կամ այն կատեգորիայի դատարանի ընդդատությանը, ինչպես և դատարանը, յերբ դործն ընդունում է իր վարույթին։

## 3. ԱՎՏՈՆՈՄ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՐԱԳՈՒՅՑՆ ԴԱՏԱԲԱՆՆԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ավտոնոմ հանրապետության Գերագույն դատարանի ընդդատությունը վորոշված է ԽՍՀՄ, միութենական ու ավտոնոմ հանրապետությունների դատարանակաղմության Որենքի 40-րդ հոդվածով յերկրամասային (մարզային) և ըստ ընդդատության նրանց համալատասախան ուրիշ դատարանների ընդդատության նման։

## 4. ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՑՆ ԴԱՏԱԲԱՆՆԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Միութենական հանրապետությունների Գերագույն դատարանի ընդդատությունը, վորտեղ չկա յերկրամասային (մարզային) բաժանում, այսինքն՝ վորտեղ չկան յերկրամասային (մարզային) դատարաններ, համալատասախան ու վերջիններիս ընդդատությանը։ Բացի այդ, քրեական-դատավարության գործող որենսդրքերը (ԽՍՀՄ Հ, ԲԵԼՈՒՍՈՎԱԿԱՆ ԽՍՀ Հոդ. 449, Վրացական ԽՍՀ Հոդ. 448, Աղբեղջանական ԽՍՀ Հոդ. 438) միութենական հանրապետությունների Գերագույն դատարանի ընդդատությանն են վերապահում (1) բացառիկ կարևորություն ունեցող դործերը. (2) ժողովրդական կոմիսարների, ժողովրդական կոմիսարիատների կունդիաների անդամների, Գերագույն դատա-

բանի անդամների, հանրապետության դատախազի ու նրա ողնականների պաշտոնեական հանցագործությունների մեղադրամքով հարուցած գործերը. 3) մարզային դատախազների ու նրանց ողնականների, մարզային գործադիր կոմիտեների նախադահությունների անդամների, մարզային դատարանների նախադահությունների տեղակալների պաշտոնեական հանցադրությունների մեղադրամքով հարուցած գործերը: Դրա հետ միասին Գերագույն դատարանին իրավունք է վերապահում 1 և 3 կետերում նշված գործերը կամ վերցնել իր վարույթին, կամ քննության հանձնել վորև ուրիշ յերկրամասային (մարզային) դատարանի:

ԽՍՀՄ, միութենական ու ավտոնոմ հանրապետությունների դատարանակազմության Որենքում միայն ընդհանուր ցուցում և արփում այն մասին, վոր միութենական հանրապետության Գերագույն դատարանը քրեական գործերի դատավան կոլեգիայում քննում և այն գործերը, վորոնք որենքով վերապահված են նրա վարույթին: Հետեապես, միութենական հանրապետության Գերագույն դատարանի ընդդատությունը վորոշելիս պետք է զեկավարվել ավյալ ժամանակին գործող քրեական-դատավարության որենողքում:

##### 5. ԶԵՆՎՈՐԱԿԱՆ ՏՐԻԲՈՒՆԱԼՆԵՐԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ, միութենական ու ավտոնոմ հանրապետությունների դատարանակազմության Որենքի 58-րդ հոդվածում ասված և, վոր «զինվորական արիբունակները քննում են զինվորական հանցագործություններին վերաբերող գործերը, ինչպես և որենքով նրանց վարույթին վերապահված այլ հանցագործություններին վերաբերող գործերը»: Զինվորական արիբունակների ընդդատությունը վորոշող որենքներին դիմելով՝ կարելի յեն նշել, վոր նրանց ընդդատյա յեն՝ զինվորական ծառայողների կատարած գինվորական հանցագործություններին վերաբերող գործերը, հայրենիքին դավաճանելու, լրտեսության, տեսողիստական ու դիմերսիոն ակտերին վերաբերող գործերը՝ ում կողմից ել վոր կատարված լինեն այդ հանցագործությունները, այն սպանություններին վերաբերող գործերը, վոր կատարել են զինվո-

րական ծառայողները՝ առանձնապես ծանրացնող համուամանքում:

Եթե ավյալ գործով մեղադրվում են միքանի անձնագործություն՝ միքանի իրար հետ կապված հանցագործությունների համար, կորոնցից միքանին ընդդատյա յեն զինվորական տրիբունալին, իսկ մյուսներն ուրիշ դատարանի, ապա ամբողջ գործը հանձնվում է զինվորական տրիբունալի քննությանը [Կանոնադրություն զինվորական տրիբունալների և զինվորական դատախազության մասին, 1926 թվականի ոգոստոսի 20 (Որ. Ժող. № 57, Հոդ. 413), ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1934 թ. հուլիսի 10-ի վորոշումը (Որ. Ժող. № 36, Հոդ. 284), 1934 թ. հունիսի 8-ի վորոշումը (Որ. Ժող. № 33, Հոդ. 255)]:

ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1934 թ. վետրվարի 27-ի վորոշմամբ (Որ. Ժող. № 12, Հոդ. 78) զինվորական տրիբունալների ընդդատությունը տարածված է բոլոր հանցագործություններին վերաբերող գործերի վրա այն վայրերում, վորտեղ բացառիկ պայմանների հետեանքով, բացի զինվորական տրիբունալներից, ուրիշ դատարաններ չեն գործում:

Պատերազմական դրություն հայտարարելու դեպքում ԽՍՀՄ Սահմանադրության 49-րդ հոդվածի «այ» կետի համաձայն զինվորական տրիբունալների ընդդատության ընդդատակում թույլատրվում է յուրաքանչյուր առանձին դեպքում միայն ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագույն դրամանադրերով:

Զինվորական տրիբունալներին, բացի զինվորական ծառայողներից, ընդդատյա յեն «այն հանցագործությունների համար, վորոնք ուղղված են ծառայություն կրելու վերաբերյալ սահմանված կարգի դեմ, նաև պետական հատուկնշանակություն ունեցող ձեռնարկությունների ու կառուցումների զինվորականացված հրգեհաշեց պաշտպանության շարային ու վարչա-տնտեսական կազմի անձերը, ուղղիշ-աշխատանքային Հիմնարկությունների ուղերատիվ ու վարչատնտեսական կազմի անձերը, ստորջրյա աշխատանքների եքսպերտիաների (ԵՊԲՌՆ) աշխատողները, քաղաքացիական ողանավատորմի պետակազմի անձերն ու քաղաքացիական ողանավատորմի թույլատրվային դպրոցներում սովորողները,

ինչպէս և կրոնական համոզմունքների նկատառումներով զինվորական ծառայությունից ազատված անձերից կազմը ված թիկունքային աշխարհազորի և աշխատանքային զորամասերի պետկազմի և շարքային կազմի անձերը» (Զինվորական հանցագործություններին վերաբերող կանոնադրության 1-ին հոդվածի ծանոթադրությունը) :

#### 6. ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՈՒ ԶՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԳԾԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Յերկաթուղային տրանսպորտի գծային դատարանների ընդդատությունը վորոշում և ԽՍՀՄ կդկ և մկի 1930 թ. նոյեմբերի 27-ի վորոշումով (Որ. Փող. № 57, Հոդ., 601), ԽՍՀՄ կդկ և մկի 1934 թ. հունիսի 10-ի լրացուցիչ վորոշումով, ԽՍՀՄ Գերազույն դատարանի 1931 և 1932 թվերի 35 և 37-րդ պլենումների վորոշումներով։ Զրային տրանսպորտի գծային դատարանների ընդդատությունը վորոշում և ԽՍՀՄ կդկ և մկի 1934 թ. հունիսի 7-ի վորոշումով (Որ. Փող. № 33, Հոդ., 251)։ ԽՍՀՄ, միութենական ու ավտոնոմ հանրապետությունների դատարանակազմության Որենքի 60-րդ հոդվածում նշված և, վոր «Յերկաթուղային ու ջրային տրանսպորտի գծային դատարանները քննում են որենքով իրենց վարույթին վերապահված գործերը՝ տրանսպորտում աշխատանքային գիսցիսլիքնան խախտելու նպատակ հատապնդող հանցագործությունների վերաբերյալ, և այլ հանցագործությունների վերաբերյալ, վորոնք խախտում են տրանսպորտի նորմալ աշխատանքը»։

Հիշյալ որենքները և ԽՍՀՄ Գերազույն դատարանի պլենումների վորոշումները մանրամասնորեն թվում են, թե հատկապես ինչպիսի գործերն են ընդդատյա այդ կատեգորիայի դատարաններին, իսկ ընդհանրապես նրանց ընդդատությունը կարելի յէ ամփոփել հետեւյալ կերպ։ յերկաթուղային ու ջրային տրանսպորտի գծային դատարաններին ընդդատյա յէն՝ տրանսպորտի նորմալ աշխատանքը խափանող բոլոր հանցագործություններին վերաբերող զործերը, յեթե նրանք ընդդատյա չեն զինվորական տրիբունալներին (որինակ՝ զիմերախոն ակտերը). տրանսպորտում կատարված խոչըր հափշտակություններին, տրանսպորտի աշխա-

տողների պաշտոնեական ու տնտեսական հանցագործություններին վերաբերող գործերը և այլն։

ԽՍՀՄ Գերազույն դատարանի 1931 թ. հոկտեմբերի 28-ին տեղի ունեցած 35-րդ պլենումը պարզաբանել եւ, վոր յերկաթուղային տրանսպորտում տեղի ունեցած հանցագործություններին վերաբերող գործերից ժողովրդական դատարաններին հանձնվել կարող են միայն այն գործերը, վորոնք վերաբերում են տրանսպորտում տեղի ունեցած մանր զորություններին, կաշառակերությանը և քիչ կարելոր բնույթի ուրիշ շահամուլական հանցագործություններին, կլինտուրայի հանցանքով տեղի ունեցած՝ շարժական կազմի հատուկենա պարապուրդներին, խուլիսանությանը, ինչպես և այն գործերը, վորոնք վերաբերում են յերկաթուղայինների մատակարարման ու նյութական-կենցաղային պայմանների բարելավման դեմ ուղղված հանցագործություններին, ըստվորում, վերջին կատեգորիայի գործերից առանձնապես կարևորները պետք ե քննության առնեն գծային դատարանները։

ԽՍՀՄ Գերազույն դատարանի 1932 թ. մայիսի 27-ին տեղի ունեցած 37-րդ պլենումը պարզաբանել եւ յերկաթուղային տրանսպորտում տեղի ունեցած հանցագործություններին վերաբերող այն գործերը, վորոնք թեկուղ և կապված են յերկաթուղային տեխնիկայի բնագավառում կատարված խախտումների հետ, սակայն բարդ չեն և յերկաթուղային տրանսպորտի տվյալ գծամասի համար առանձին հասարակական-քաղաքական նշանակություն չունեն, կարող են հանձնվել ժողովրդական դատարաններին։

Այդ կատեգորիայի գործերը ժողովրդական դատարաններին են ուղարկում դատախազությունը կամ համապատասխան գծային դատարանները։

#### 7. ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ԽՍՀՄ Գերազույն դատարանում, վորպես առաջնի առաջին ատյան, քրեական գործերի քննությունը յէլ յէ ունենում ըստ առանձին կոլեգիաների։ Դայտ առնապատճեան ԽՍՀՄ Գերազույն դատարանի ընդունությունը ժողովրդական դատարաններու ընդունությունը կամ առաջնական գործությունը պահպան առաջին դատարանները։



վում և վո՛չ թե ըստ ընդհանուր նշանների, այլ յուրաքանչյուր կոլեգիայի համար առանձին:

ԽՍՀՄ Գերազույն դատարանի քրեական դործերի դատական կոլեգիային ընդդատյա յեն՝ ԽՍՀՄ դատախազության կողմից քննության հանձնված այն դործերը, մորոնք վերաբերում են բացառիկ կարևորություն ունեցող հանցադործություններին, ինչպես և այն բարձր պաշտոնատար անձերի դործերը, մորոնք ընդդատյա չեն վերը թված դատարաններին։ ԽՍՀՄ Գերազույն դատարանի գինալորական կոլեգիային ընդդատյա յեն այն դործերը, մորոնք վերաբերում են հայրենիքին դափանանելուն, լրանությանը, տեսորիստական ու դիմերսիոն ակտերին և տեսորիստական ագիտացիային ու պրոպագանդային, այն դեպքում, յեթե այդ դործերը զինվորական կոլեցիայի քննությանն են հանձնված ԽՍՀՄ Դատախազի վորոշմամբ։ այն դործերը, մորոնք վերաբերում են պետական հանցադործություններին, զինվորական հանցադործություններին, ինչպես և գույքի հափշտակման, ըստվորում այդ դործերի ընդդատությունը վորոշում և մեղադրյալների պաշտոնեական դիրքով։

ԽՍՀՄ Գերազույն դատարանի յերկաթուղային ու ջրային տրանսպորտի կոլեգիաներին ընդդատյա յեն յերկաթուղային ու ջրային տրանսպորտի գծային դատարաններին ընդդատյա զործերից հատուկ կարևորություն ունեցող դործերը, մորոնք Գերազույն Դատարանի կոլեգիաների քննությանն են հանձնվել ԽՍՀՄ Դատախազի կողմից, ինչպես և այն դործերը, մորոնք վերաբերում են այն պաշտոնեական և անտեսական հանցադործություններին, վոր կատարել են հատուկ վորոշումներով նշանակած՝ յերկաթուղային ու ջրային տրանսպորտի դեկանար աշխատառղներ։

Գ Լ Ա Խ Խ IV

## ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ

### ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

1. ԳՈՐԾԵՐԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՃԵՏԱԿԱՆ ՀԱՐՑԸ  
ՍՅՈՒԳՈՂ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱԶՄԸ

Յերբ դործը դատարանում ստացվել է, դատավորը պետք է ստուգի՝ այդ դործն ընդդատյա յե արդյոք տվյալ

դատարանին։ Պարզելով, վոր տեղային (տերիտորիալ), տեսակային կամ, վերջապես, պերսոնալ ընդդատության պատճառով դործն ընդդատյա չե տվյալ դատարանին, ժողովրդական դատավայտական կամավատասիան դատարանի նախապահը դործը մտցնում է դատարանի նախապատրաստական (անորինական) նիստը՝ դործն ուրիշ, համապատասիան (անորինական) ընդդատության դատարանի հանձնելու հարցը լուծելու համար։

Այս կամ այն դործը տվյալ դատարանին ընդդատյա չինելու մասին պետք է կայացվի դատարանի նախապատրաստական (անորինական) նիստի վորոշումը՝ նշելով, թե ինչո՞ւ և վո՞ր որենքի հիման վրա դատարանն իրեն ընդդատյա չի համարում դործը և վոր դատարանին պիտի հանձննի այն քննելու։ Դատարանի վորոշումն ստորագրում և դատարանի ամբողջ կազմը, վոր դատարանի նախապատրաստական (անորինական) նիստում քննել ե ընդդատության հարցը։ Դատարանի վորոշման հետ դործը պետք է ուղարկվի ուրիշ դատարան, ըստ համապատասիան ընդդատության։

Դատախազը, յեթե նա տվյալ դործի ընդդատության վերաբերյալ դատարանի վորոշումը ճիշտ չի համարում, կարող է բողոքաբեկ, իսկ մեղադրյալը, նրա պաշտպանը, կամ այլ անձերը, մորոնք զանգատարեկելու իրավունքունեն, կարող են դանդաստ տալ վերադրաս դատարանին։

Գործն ըստ ընդդատության ուրիշ դատարանի հանձնելու վերաբերյալ դատարանի վորոշման իրավործումը կարող է գաղարեցվել միայն այն դեպքում, յերբ ըստ դործի հանդամանքների դատավորն այդ անհրաժեշտ կհամարի (ՌԽՖՍՀ, Բելոռուսական ԽՍՀ, Վրացական ԽՍՀ Քր. Դատ. Որ. 346-րդ հոդվ. և մյուս միութենական հանրապետությունների Քր. Դատ. Որ. համապատասիան հանձնելու)։

Յեթե տվյալ դործի վոչ-ընդդատությունը պարզվում է դատական նիստում դործը քննելու ժամանակ, այդ դեպքում դործն ըստ համապատասիան ընդդատության հանձնելու դործը լուծվում է դործը քննող դատարանի ամբողջ կազմով։

2. Միեվնոհեցն կԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻՆ  
ԸՆԴՀԱՏՅԱ ԳՈՐԾԵՐԻ ՄԻԱՅՈՒՄԸ

Միենույն կատեղորիայի դատարաններին ընդդատյա գործերի միացման անհրաժեշտության յերկու դեպք են Հնարալոր:

Առաջին դեպքը—յերբ միենույն գործը կարող է ընդդատյա լինել միքանի միանման դատարանների (որինակ՝ ժողովրդական դատարանների), այն պատճառով, վոր մեղադրյալը (կամ մեղադրյալները) հանցազործությունը կատարել են վոչ թե մեկ, այլ միքանի դատարանների գործունեյության շրջանում (որինակ՝ միքանի մեղադրյալների փոխադարձ համաձայնությամբ անասունների դողությամբ են դբաղվել միքանի շրջանում): Այդ դեպքում գործն ընդդատյա յե այն դատարանին, վորի գործունեյության շրջանում քրեական հետապնդում ե հարուցված:

Եթե մեղադրանքը հարուցված է միքանի դատարանների գործունեյության շրջանում, ապա գործն ընդդատյա յե այն դատարանին, վորտեղ գործն ավելի առաջ է հարուցվել (ՌԽՖՍՀ, Բելոռուս. ԽՍՀ, Վրացական ԽՍՀ Քր. Դատ. Որ. 33-րդ հոդված. և մյուս միութենական հանրապետությունների Քր. Դատ. Որ. Համապատասխան հոդվածները):

Երկրորդ դեպքը—յերբ մեկ մեղադրյալը կատարել է միքանի տարբեր հանցազործություններ, վորոնք ընդդատյա յեն միենույն կատեղորիայի դատարաններին (որինակ՝ ժողովրդական դատարաններին), բայց տարբեր վայրերում, վո՞չ թե մեկ, այլ միքանի դատարանների գործունեյության շրջաններում: Որինակ՝ մեղադրյալը մի ժողովարանի գործունեյության շրջանում կատարել է վատնում, մի ուրիշ դատարանի գործունեյության շրջանում՝ գողություն, յերրորդի շրջանում՝ կողոպուտ: Այդ դեպքում գործերը կարող են միացվել մեկ դատաքննության մեջ և ընդդատյա յեն այն դատարանին, վորի շրջանում սկսվել է գործի քննությունը (ՌԽՖՍՀ, Բելոռուսական, Վրացական, Հայկական ԽՍՀ-ների Քր. Դատ. Որ. 34-րդ հոդվածը և մյուս միութենական հանրապետությունների Քր. Դատ. Որ. Համապատասխան հոդվածները):

3. ՏԱՐԲԵՐ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻՆ  
ԸՆԴՀԱՏՅԱ ԳՈՐԾԵՐԻ ՄԻԱՅՈՒՄԸ

Միենույն անձի կատարած միքանի հանցազործություններին վերաբերող գործերը, կամ թե միքանի մեղադրյալների կողմէց կատարված միքանի հանցազործություններին վերաբերող գործերը, վորոնցից միքանի գործերն ընդդատյա յեն մի կատեղորիայի դատարանի, մյուսները՝ ուրիշ կատեղորիայի (որինակ՝ ժողովրդական դատարանին կամ յերկրամասային դատարանին), այլպիսի գործերը մեկ վարույթի մեջ միացնել կարելի յե միայն այն դեպքում, յերբ մեկ անձի կամ միքանի անձների կատարած հանցազործություններին իրենց մեջ ունեն ներքին կապ, վոր արտահայտվում է կամ մի հանցազործության մեջ միքանի անձների մասնակցությամբ, կամ մի անձի կատարած միքանի հանցազործություններով, վորոնք իրար հետ կապված են մտադրություններով, վորոնք իրար համապատասխային դատարանի ընդդատության միասնությամբ: Այդ դեպքում՝ մեկ վարույթի մեջ միացված գործը, թեկուղ և իր բնույթով ընդդատյա յե տարբեր կատեղորիաների դատարանների, քննության և տրվում այն վերադաս դատարանին, վորին ընդդատյա յե այլալ դատարանի քննությանը յենթակա հանցազործությունների մի մասը: Վերոհիշյալ որինակում այլպիսի գործը պետք է հանձնել յերկրամասային դատարանի ընդդատությանը:

Սխալ է համարվում այնպիսի գործերի վարույթի մեխանիկական միացումը, վորոնք ներքին կապ չունեն, այլ միայն արտաքին ընդհանուր նշաններ ունեն (հանցազործությունը միենույն հիմնարկում կատարված լինելը, միմնույն ժամանակ կատարված լինելը և այլն):

Ժողովրդական դատարանը անորինական նիստում գործը քննելիս պարտավոր է ստուգել նաև այն հարցը, թե այլալ գեպքում տարբեր գործերի մեխանիկական միացում չի՞ կատարվել արդյոք և յեթե պարզի, վոր այլպես և յեղել, պետք է գործը վերադասնի դատախազությանը՝ գործը բաժանելու և ըստ համապատասխան ընդդատության ուղարկելու համար:

Հնարավոր են նաև այնպիսի գեպքեր, յերբ գործի մեջ

անհրաժեշտ նշաններ կան միացնելու մեկ վարույթի մեջ և հանձնելու վերաբաս դատարանի քննությանը, սակայն, ըստ առանձին մասերի բնույթի ավելի նպատակահարմար ե գործի մի մասը քննել ստորագաս դատարանում, մյուս մասը՝ վերաբաս դատարանում։

Որինակ, միացված գործերից մեկը հարուցվում ե մասնավոր, մյուսը՝ հրապարակային մեղադրանքի կարգով։ Այդ գեղգում մեկ վարույթի մեջ միացված գործերը, թե կուզ և միասնություն լինի մեղադրյալի կատարած գործողությունների մեջ, պետք ե բաժանվի յերկու ինքնուրույն գործերի և նրանցից յուրաքանչյուրը պետք ե քննվի առանձին դատարանում՝ ըստ ընդդատության։

Այս գեղգում ստորագաս դատարանը դատավճիռ կայացնելուց և այն ուժի մեջ մտնելուց հետո պարտավոր ե դատավճիռի պատճենն ուղարկել այն վերադաս դատարանին, վորտեղ քննվելու յե գործի մյուս մասը, վորպեսզի վերջինը համացությամբ դատավճիռ կայացնի նույն դատապարայալների մասին (ՌԽՖՍՀ, ՅԵՍՀ-ների Քր. Դատ. Որ. 35 հոդ. Ռւկաինական ԽՍՀ Քր. Դատ. Որ. 32 հոդ.)։

Յերբ գործում մեղադրանքներ կան միքանի հանցագործությունների նկատմամբ կամ միքանի մեղադրյալների նկատմամբ, վորոնցից մեկը կամ միքանին ընդդատյա յեն յերկրամասային (մարզային) դատարանին, իսկ մյուսները զինվորական տրիբունալին կամ ուրիշ հասուկ դատարանի (յերկաթուղային կամ ջրային տրանսպորտի զծային դատարանին), այդ գեղգում բոլոր հանցագործությունների ու մեղադրյալների նկատմամբ գործն ընդդատյա յե համապատասխան հատուկ դատարանին (ՌԽՖՍՀ, Վրացական, Ադրբեյջանական ԽՍՀ Քր. Դատ. Որ. 39-րդ հոդվ., Ռւկաինական ԽՍՀ Քր. Դատ. Որ. 33-34 հոդվ., Ադրբեյջ. ԽՍՀ-հոդ. 34-ա)։

#### 4. ԳՈՐԾԸ ՄԻ ԴԱՏԱՐԱՆԻՑ ՄՅՈՒՍԻՆ ՀԱՆՁՆԵԼԻ

Յերբ դատարանը պարզում ե, վոր իր մոտ իրեն վոչընդդատյա գործ ե ստացվել, պարտավոր ե անհապաղ այդ գործն ուղարկել այն դատարանը, վորին այն ընդդատյա

յե։ Սակայն հնարավոր ե, վոր գործի՝ տվյալ դատարանին վոչընդդատյա լինելը պարզվի այն ժամանակ, յերբ դատական նիստում սկսվել ե գործի քննությունը։ Դատարանն ինչպես պիտի վարդի այդ գեղգում։

Յեթե գործն ընդդատյա յե նույն կատեղորիայի դատարանի, այսինքն, յեթե, որինակ, ժողովրդական դատարանը պարզի, վոր իր վարույթի տակ կա այնպիսի գործ, վորն ընդդատյա յե նույնպես ժողովատարանի, բայց ուրիշ տեղամասի, շրջանի կամ մարզի և կամ նույնիսկ ուրիշ յերկրամասի ժողովատարանի, նա կարող ե գործն իր վարույթին թողնել միայն այն գեղգում, յերբ դատական նիստում արդեն սկսվել ե գործի քննությունը, յերբ դատարանն արդեն սկսել ե գործին վերաբերող ապացույցներն ատուգել։ Հստ տեղային ընդդատության այդ դատարանին վոչընդդատյա գործը տվյալ դատարանի վարույթին թողնելու հարցը լուծվում ե գործին մասնակցող կողմերի համաձայնությամբ։

Յեթե դատական նիստում պարզվի, վոր գործն ընդդատյա յե վերադաս դատարանին, դատարանը, անկախ կողմերի համաձայնությունից, պարտավոր ե դատաքնությունն ընդհատել և գործն ուղարկել համապատասխան ընդդատության դատարանին։

Գործն ուրիշ դատարանի հանձնելու մասին պետք ե կայացվի դատարանի պատճառաբանված վորոշում (ՌԽՖՍՀ Քր. Դատ. Որ. 39-րդ հոդվ. և մյուս միութենական հանրապետությունների Քր. Դատ. Որ. համապատասխան հոդվածները)։

Յեթե գործը պետք ե ուղարկվի ուրիշ միութենական հանրապետության դատարան, ապա դատարանն իր վորոշման հետ այդ գործն ուղարկում ե իր հանրապետության ֆերազույն դատարանը՝ ընդդատության հարցը վերջնականապես լուծելու համար։

#### 5. ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԵԲԻ ԱՆԹՈՒՅՑԱՏԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Միութենական հանրապետությունների Քրեական-դատավարական որենսգրքերը (ՌԽՖՍՀ Քր. Դատ. Որ. 40-րդ

Հոդ. և մյուսա միութ. հանր. Քր. Դատ. Որ. Համապատաս-  
խան հոգվածները) պահանջում են, վոր ուղնքով սահման-  
ված կարգով ըստ ընդդատության մի դատարանի կողմից  
մյուս դատարանին ուղարկված գործերն անպայման վերջի-  
նիս կողմից ընդունվեն իր վարույթին:

Յեթե այն դատարանը, վորին ըստ ընդդատության  
ուղարկված ե գործը, դանում ե, վոր այդ ճիշտ չե արված,  
այնուամենայնիվ պարտավոր ե գործն ընդունել իր վարույ-  
թին և քննել այն: Միայն դատավճիռը կայացնելուց հետո  
դատարանը գործն ուղարկող դատարանի թույլ տված ան-  
հըշտության մասին հաղորդում ե վերադաս դատարանին:


Յեթե ստորագաս դատարանը վերադաս դատարանին  
ուղարկում ե գործ, վորն, ըստ վերադաս դատարանի կար-  
ծեքի, ճիշտ չե ուղարկված, այնուամենայնիվ նա պետք ե  
այդ գործն ընդունի իր վարույթին և դատավճիռը կայաց-  
նելուց հետո նշի ընդդատության խախտումը ստորագաս  
դատարանի կողմից:

Դատարանների միջև ընդդատության վերաբերյալ վե-  
ճեր չթույլատրելու նպատակը՝ գործերն արագ քննելն ե:

Այսուեղից ել բջխում ե դատարանների խնդիրը—գործե-  
րի ընդդատությունը ճիշտ վորոշել, նկատի ունենալով, վոր  
վերադաս դատարանին ընդդատյա գործը ստորագաս դա-  
տարանի կողմից քննվելը, կամ թե հատուկ դատարանին  
ընդդատյա գործն ընդհանուր դատարանի կողմից քննվելը,  
այսինքն իրավասության սահմանների խախտումը կարող է  
դատավճուի բեկման պատճառ դառնալ:

ՀԱՄԵՆՄԱԿԱՆ ԱՊՅՈՒՍԱԿ  
ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՐՑԱՓԵՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ-ԳԱՏԱՎԱՐՈՒ-  
ԹՅԱՆ ՈՐԵՆՍԴՐԲԵՐԻ ԱՅՆ ՀՐԴՎԱԾՆԵՐԻ, ՎՈՐՈՇԻ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ  
ԵՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻՆ

Ո.Խ.Ց.Ա.Հ.	Ո.Խ.Բ.Ա.Հ.	Բ.Խ.Ա.Ա.Ա.Հ.	Վ.Խ.Ա.Ա.Հ.	Ա.Խ.Բ.Հ.Ճ.Ա.Ա.Հ.	Ո.Խ.Բ.Հ.Ճ.Ա.Ա.Հ.	Տ.Խ.Ա.Ա.Հ.	Տ.Խ.Ջ.Ա.Ա.Հ.	Հ.Խ.Ջ.Ա.Ա.Հ.
24	25	24	24	24	—	—	—	24
25	26	25	25	25	69	—	—	25
26 (փոխ- կած ե)	—	26—26ա	26	26	69	—	—	26
27	ծանոթ. 27-բդ հոդ.	—	27	27	73	58	27	
28,28 ա	ծանոթ. 27-բդ հոդ.	—	—	27 <sup>1</sup>	—	—	—	28
29	28	29	28	28—29	77	63	29	
30	28.մ.2 29	30	30	29.մ.1	80	—	—	30
31	—	31	31	—	—	64	31	
32	—	—	32	31	—	—	—	32
33	30	33	33	32	79	—	—	32
34	31	34	34	33	—	—	—	34
35	32	35	35	—	—	—	—	35
36	33—34	—	36	34 ա	—	—	—	36
37—38	—	—	—	—	—	—	—	37
փոխ- կած են	36	39	38	36	78	—	—	38
40	37	40	39	37	76—81	65	39	
346	335	346	346	343	—	109	324	
449	379	449	448	438	74	59	—	



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Գլուխ I.	Ընդդատության դատավարական նշանակությունը . . . . .	3
Գլուխ II.	Ընդդատության տեսակները . . . . .	6
	1. Տեղական կամ տեղիսորմալ ընդդատություն . . . . .	6
	2. Տեղակային կամ առարկայական ընդդատություն . . . . .	8
	3. Պերսոնալ ընդդատություն . . . . .	8
Գլուխ III.	Գործերի ընդդատությունն ըստ միուրենական համապետությունների քրեական դատավարության որենսգրքերի . . . . .	9
	1. Ժողովրդական դատարանի ընդդատությունը . . . . .	11
	2. Ցերկումասային (մարզային), ոկրուզային դատարանների և ավտոնոմ մարզերի դատարանների ընդդատությունը . . . . .	12
	3. Ավտոնոմ հանրապետությունների գերազույն դատարանի ընդդատությունը . . . . .	13
	4. Միուրենական հանրապետության գերազույն դատարանի ընդդատությունը . . . . .	13
	5. Զինվորական արիբունալների ընդդատությունը . . . . .	14
	6. Ցերկաթուզային և ջրային արանսպորտի գծային դատարանների ընդդատությունը . . . . .	16
	7. ԽՍՀՄ Գերազույն դատարանի ընդդատությունը . . . . .	17
Գլուխ IV.	Ընդդատության հարցերի լուծման կարգը . . . . .	18
	1. Գործերի ընդդատության հարցը ստուգով դատարանի կազմը . . . . .	18
	2. Միենույն կատեգորիայի դատարաններին ընդդատյագործերի միացումը . . . . .	20
	3. Տարբեր կատեգորիաների դատարաններին ընդդատյագործերի միացումը . . . . .	21
	4. Գործը մի դատարանից մյուսին հանձնելը . . . . .	22
	5. Ընդդատության վերաբերյալ վեճերի անթույլատրեմությունը . . . . .	23



Թարգմ. Հ. Հարությունյան

Խմբ. Ս. Մամյան

Տեխ. Խմբ. Գ. Զենյան

Սրբազրիչ Հ. Գոլուխանյան

Կոնտրոլ սրբազրիչ Յ. Ցեր-Մինասյան

Պատգեր № 211.

Տակած № 211. տիրած 1000, տիրած 1000

Հանձնվել է արտադրության 3/VII 1940 թ.

Ստորագրվել է ապագրելու 2/IX 1940 թ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության

ապարան, Ցերեան, Ալլահվերդյան № 65

Տիպոգրաֆիա Гос. изд. полит. литературы, Ереван, Аллавердян № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0221157

33 36.130

ԳԻՒԸ 70 Կ.

աշ 1  
աշ 2

М. В. КОЖЕВНИКОВ  
ПОДСУДНОСТЬ  
УГОЛОВНЫХ ДЕЛ

ИЗДАНИЕ НАРКОМИОСТА АРМ. ССР

Типография Гос. изд. полит. литературы, Ереван, Аллавердян № 65